

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Рицинус

Рицинус вспомогательный

Бактериальный Рицинус




1931/

9(51)
Q-76

Ե. ԶՈՓՈՒՐՑԱՆ

323.



ԿՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՄԱՐՏՆՉՈՂ ԶԻՆԱՍՏԱՆԸ

(1927—1931)



ԳԵՐԵՐԱԾ

1931

ՏԵՐԵՎԱՆ

Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Ն

Յակառութեակ 2-րդ ինստերնացիոնալի լիդերներ Վանդերվելդեիք .
Ալբեր Տամայի նրանց զաշնակից Տրոցկու, ըենեգատ Զեն-Դու-Սաւէ
հայաստանություններին՝ Գոմինդանի ղեկավարությամբ Զիստառ-
նում ազգային խնդուստրիայի ստեղծման և զարգացման, ինչպես
և գոմինդանական ռեժիմի կայտնացման մասին, Զինական,
Հեղափոխությունը, Կոմկուսակցության ղեկավարությամբ, բան-
վորա-պյուղացիական միլիոնավոր մասսաների մասնակցությամբ
և քաղաքացիական կովի բովով առաջ և ընթանում ղեպի հաղ-
թանակ :

Ծիփոնավոր բանվորներ ու գյուղացիներ՝ զինված ասլատամ-
բության միջոցով կովում են բուրժուազիկաստական հեղափո-
խությունն իր վախճանին հասցնելու, բանվորա-պյուղացիական
գիկատառությայի, սոցիալիստական հեղափոխության անցնելու լո-
գունդի տակ :

Զինատատանի մի շարք նահանգներում մի տարուց ավելի յե,
ինչ հաստատվել ե խորհրդային իշխանություն :

Գոմինդանական սպիտակ տերրորը, տեղական ադրարային
մշտական կրիզիսի սրումը՝ համաշխարհային տնտեսական ճշգր-
նաժամի պայմաններում, գործադրկությունը, միլիոնավոր չքա-
զոր գյուղացիության անլուր շահագործումը, ծայր աստիճան
հասցնելով մասսաների թշվառությունը, զարգացնում են նրանց
գուակարդային գիտակցությունը, բայց են անում նրանց առաջ
աղատագրման միակ ուղին՝ հեղափոխության ուղին :

Այդ պայմաններում ձևված, քաղաքացիական կովի բովում
կոփված չինական կարմիր բանակը, Կոմկուսակցության ղեկա-
վարությամբ իրականացնում և պաշտպանում ե այն իշխանու-
թյունը, վորին ձգտում են մասսաները՝ խորհրդային իշխանու-
թյունը :

Գոմինդանական միլիտարիստների, իմպերիալիստների, կաշ-
գածատերերի կոալիցիան մոտ մի տարի յե չի կարողանում իս-
նարհեցնել խորհուրդների դրոշը, աշխատավորական մասսաների
արյան մեջ խեղդել հեղափոխությունը :

Կանառնի կոմունարների անձնագոհությունը և հերոսությու-
նը վողեվրում և առաջնորդում են կոմունարների նոր միլիոնա-
գոր մասսաները, վորոնք գենքի ձեռին վատի յեն կանգնել ազրա-

ՊԵՏՐՈՎԻ ՏՊԱՐՄ
ԳԼՈՎՆԻ 6849 (Բ)
ՀՐԱՄԱԿ. Խ 1844
ՊԱՏՎԵՐ 5140
ՏԵՐԱՎ 4000



Կ 3457-63

բային հեղափոխության, բանվոր դասակարգի ազատագրման, Գոմինդանական միլիտարիզմի վոչչացման համար:

Չինական հեղափոխությունը միջազգային պրոլետարիատի հեղափոխական շարժումների ամենամասնավոր մի էն և կազմում: Նրանով վողելորդում և գաստիարակվում են միլինավոր մասներ, իրենց առորյա պայքարի ընթացքում:

Նրան ողնության պետք է Հասնեն բոլոր յերեների աշխատավորները:

Ներկա բրոցյուրի նպատակն ետակ իրադարձությունների դարձումը չինական հեղափոխության նոր խորհրդային եռապում, կանոննի կոմունայից մինչև խորհուրդների կադմակենացման ներկա ժամանակաշրջանը:

1-ին սեպտ. 1931 թ.

Ե. ԶՈՓՈՒՐՑԱՆ

ՖԱԼՈՒԹՆԵՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱՋՄՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ «ՅԵՐԿՐՈՐԴ» ՇՐՋԱՆՈՒՄ

Թմպերիալիստական պատերազմից հետո կապիտալիզմի քայլացման և անկման շրջանին հաջորդեց հետպատերազմյան կապիտալիզմի յերկրորդ, մասնակի և ժամանակավոր կայունացման շրջանը:

Այդ յերկրորդ շրջանի բնորոշ կողմերից մեկն ել, ի միջի այլաց, այն եր, վոր հեղափոխական շարժումները յելքուական յերկրոներից տեղափոխվեցին գաղութային և կիսագաղութային յերկրոները: Սկսվեցին Մարոկոյի, Սիրիայի ազատամբությունները, բայց մանավանդ մեծ ծավալ ստացան քաղաքացիական կոիպները Չինաստանում:

Չինական հեղափոխության մեջ այս այն շրջանն եր, յերբ չիմեական ֆրոնտն ուղղված եր միլիտարիստ-ֆեոդալների և ոտքը իմպերիալիզմի դեմ: Սակայն չինական բուրժուազիան տուանձին անդոր եր բուրժուական-դեմոկրատական հեղափոխության խորհրները լուծել և փնտում եր բաննուրների ու գյուղացիների սժանդակությունը: Այդ շրջանում, հակաֆեոդալական և հակաժմպերիալիստական պայքարում միասնաբար հրապարակ եյին յեկել չինական բուրժուազիան, մանր բուրժուազիան, պրոլետարիատը, և գյուղացիությունը՝ ընդդեմ ուեակցիայի և իմպերիալիզմի:

Այդ պայքարում աճեց ու դաստիարակվեց չինական պրոլետարիատը, վորն ազգային-ազատագրական պայքարում դրեց իր ինքնաւրայն խնդիրները:

Հնարավո՞ր եր այդ հակաղիր գասակարգերի միասնական ֆրանտը—ժամանակավոր համաձայնություն: Անպայման այս:

Հենինը նախատեսել եր այդպիսի հնարավորություն: Կոմինակրնի 2-րդ կոնդրեսի թեղիսներում նա գրում եր.

«Անհրաժեշտ ե վճռական պայքար մղել այն յերեսութիքնեմ, վոր հետամնաց յերկրներում բուրժուա-դեմոկրատական ազատագրական հոսանքները ներկվում են կոմունիզմի դույնով: Կոմունիստական ինտերնացիոնալը գաղութներում

և հետամնաց յերկրներում բուրժուա-դեմոկրատական աշ-
քային շարժումներին պիտի սատարե լոկ այն իմաստով՝
վորպեսդի բոլոր հետամնաց յերկրներում ապագա պրոլե-
տարական կուսակցությունների տարրերը՝ կոմունիստա-
կան վոչ միայն անունով՝ խմբավորվեն և դաստիարակվեն
իրենց առանձին անելիքների գիտակցությամբ, վոր և պար-
քար ընդդեմ բուրժուա-դեմոկրատական շարժումների՝ թ-
րենց աղջի ծոցում։

Հկոմունիստական ինտերնացիոնալը պետք է ժամանա-
կավոր համաձայնությունների, անդամ դաշնակցություն-
ների մեջ մանե զաղութների և հետամնաց յերկրների բուր-
ժուական դեմոկրատիայի հետ, բայց չնույնի նրա հետ, այ-
նազայման պահպանե պրոլետարական շարժման ինքնու-
րույնությունը, նույնիսկ նրա սաղմային ձևում։ (Ընդ-
դուռներն իմն են. Ե. Զ.)։

(Ենի՞ն. — Թեզիսներ պզային և գաղուրային հարցերի մասին.
ընդունված կոմիտերին 2-րդ կոնգրեսում, հայերեն՝ «Ազգային հար-
ցը» մռավածույի եջ 353)։

Յենելով այս դիրեկտիվը, 1924 թ. Զինական կոմունիստա-
կան կուսակցությունը հարեց Գոմինդան կուսակցության։ Գո-
մինդանը (վոր չինարեն նշանակում և աղդային ժողովրդական
կուսակցություն), վոչ թե մի կուսակցություն եր, այլ մի քանի
կուսակցությունների խմբավորում։ Նրան մասնակցում եյին բա-
ցի Զինկոմկուսից, բուրժուական և մանր բուրժուական կազմու-
կերպություններ, գյուղացիական միություններ և այլն։

Սնհագեցտ և առանձին ուշադրություն դարձնել կենինի կոչ-
ժից թեզիսներում մտցրված այն կետի վրա, վորտեղ ասված ե...
«բայց չնույնի նրա հետ, այլ անպայման պահպանե պրոլետարա-
կան շարժման ինքնուրույնությունը, նույնիսկ նրա սաղմային
ձևում»։ Այս չափազանց կարևոր ե։ Զինական կոմիուսը, բուր-
ժուապիտիայի և մանր բուրժուապիտի հետ միասնաբար պայքարե-
լով հանդերձ միլիտարիստների և իմպերիալիստների գեմ, պար-
ապավոր եր ժամանակավոր այդ զինադադարն ուժադրուծել բուր-
ժուապիտիյին քողազերծ անելու, գյուղացիությունը պրոլետա-
րիատին կապելու, պրոլետարիատի մեջ՝ իր հեղեմոն դերի գի-
տակցությունը զարթեցնելու և խորացնելու համար։

Այսուղ եր, վոր չինական կոմկուսի նախկին զեկավագու-
թյունը սայթաքեց և փոխանակ իր առաջ դրված վերոհւշյալ իրեն-
դիքները նիշա կերպով լուծելու, ընկալ պոչտականության մեջ,
նու չկարողացավ ուղարկել մի շարք վճռական մռմենամներից՝ շեշ-

աելու ազգային-աղաստազբական շարժման մեջ պրոլետարիատի
հեղեմոն դերը։

1926 թ. վերջերը և 1927 թ. չինական հեղափոխության բուռն
վերելքի ըրջանն է։

Հակառակ իմպերիալիստների զինված ինտերվենցիային և
ֆեոդալ միլիտարիստներին ցույց տված ոժանդակությանը, հա-
րավային Զինաստանի աղդային հեղափոխական բանակները հաղ-
թական արշավ սկսեցին (հայտնի Հյուսիսային արշավանքը),
գրավեցին լայնածավալ տերիտորիաներ և յեր Շանհային մոտե-
ցան, ապստամբուց այդ քաղաքի բանվորությունը, բանակի քա-
րտք մռավելց առաջ իր ձեռքը վերցրեց իշխանությունը։

«1927 թ. մարտի ապստամբությունը Շանհայում, աս-
ված և կոմինտերնի 6-րդ կոնգրեսի վորոշումների մեջ,
գրեց պրոլետարիատի հեգեմոնիայի խնդիրն ազգային-հե-
ղափոխական շարժման մեջ» : (Ընդդուռներն իմն են. Ե. Զ.)։

Հենց այսուղ իսկ յերեան յեկավ այն փամամալ, վոր հեղա-
փոխության վերելքի և զարգացման պայմաններում բաժանում եր
բուրժուազիային և պրոլետարիատին։ Հեղափոխության հետաքա-
զարգացումը կամ պետք է կասեցվեր բուրժուազիայի կողմից՝ ա-
ռանց լուծելու նույնիսկ բուրժուական-դեմոկրատական հեղափո-
խության հիմնական ինչիրները, կամ պրոլետարիատը, գիտակից
իր հեղեմոն դերին, իր վախճանին հասցնելուց հետո բուրժուա-
կան-դեմոկրատական հեղափոխությունը՝ հակառակ բուրժուա-
զայի կամքի անցներ սոցիալիստական հեղափոխության։

Այս հանդամանքը չինական բուրժուազիային վերջնականապես
հրեց գեղի ունակցիան, զեղի կոմպրոմիս՝ իմպերիալիստների և
ֆեոդալ միլիտարիստների հետ։

1927 թ. ապրիլին տեղի ունեցավ վորահրամանատար Զան-
յայ-Շիի հեղաշրջումը։ Զինական բուրժուազիայի այդ տիպիկ
ներկայացուցիչը հարձակում սկսեց պրոլետարիատի և հեղափո-
խական գյուղացիության ու նրանց կազմակերպությունների դեմ,
առանձնապես Զինկոմկուսի դեմ։

Սկսեց արյունուտ տերրորի մի ըրջան։

Բուրժուազիայի այդ հարձակման առաջ Զինկոմկուսի նախ-
կին զեկավարությունը չկարողացավ համապատասխան ըրջադարձ
հաստացնել։ Նրա անցյալ ամբողջ գործունեյությունը, պոչականու-
թյունը հնարավորություն չտվին ժամանակին հակահարձակման
անցնելու։ Բուրժուազիայի հարվածների առաջ պրոլետարիատը
համարյա անգեն եր, անպատճառ գիմաղբավելու և հակագրուհի

անցնելու : Ենորհիվ դեկազարության փոփոխության, Կանտոնի սիմալներն ուղղվեցին :

Թեև «մի շարք ապօտամբությունների միջոցավ» (Հայունի և Ին-Տինի ապօտամբությունը, գյուղացիական ապօտամբությունը Հունանում, Հուբեյում, Դուտնդունում, Ցյան-Սույում) բանվոր դասակարգն ու գյուղացիությունը զեռևս փորձ արին խլելու իմասնությունը խմաներիամբ, բուրժուազիայի, կալվածատերերի ձեռքից և գրանով խակ կանխելու հեղափոխության պարտությունը, բայց նրանց չաջողվեց այդ» (Կոմինտերնի 6-րդ կոնգրեսի քանաձեկից) :

Հեղափոխության ալիքի առաջ թումբ եր կանոնեցրված, բուրժուազիամբ իմասներիամատական կողմը ժամանակավարութեան հաղթել եր :

Ահա այդ սրայմաններում եր, վոր Կանտոնի բանվորները հերթուական մի փորձ կատարեցին, խորհրդային իշխանություն, բանվորների և գյուղացիների գեմոկրատական դիկտատուրա հաստատելու համար : Հայտարարվեց կանտոնի կոմունան : Առաջին անգամ պատմարթյան մեջ Արևելյան Ասիայում, կիսազարության մի յերկրում, բարձրացավ խորհրդների դրոշակը :

Յեթե 1905 թ. Լենինը, խոսելով ուղևական հեղափոխության ազգեցության մասին գաղութային և կիսադաշտային յերկրների ժողովուրդների վրա, դրում եր, վոր «Միլիոնավոր ժողովուրդներ զարթնում են նոր կյանքի համար», 1927 թ. Կանտոնի կոմունան մի քայլ առաջ եր գնում, վորովհնետե այդ նոր կյանքը մտնում եր նոր փուլի, խորհրդային փուլի մեջ :

«Կանտոնի ապօտամբությունը, ասլած է կոմինտերնի 6-րդ պլենումի վորոշման մեջ, պետք է հաշվի առնել վորովի չինական բանվորների մեծադույն հերոսության մի որինակ, բանվորների, վարսեական հավակնության ունեն ստանձնելու չինական մեծ հեղափոխության հեզմոնի պատմական դերը...» :

Նույնպիսի դնահատական տվեց Կոմինտերնի 6-րդ կոնգրեսը :

«Կոնդրեսը միանդամայն սիմալ և գտնում կանտոնի ապօտամբությունը սոսկ մի պուտչ համարելու փորձը կանտոնի ապօտամբությունը, վորը չին պրոլետարիատի արերգարդային(վերջազան) հերոսական մարտն եր չինական հեղափոխության նախորդ շրջանում, չնայած զեկավարության կոպիտ սիմալներին, մնում ե վորպես չինական հեղափոխության նոր, խորհրդային փուլը » :

Կանտոնի ապօտամբությունը Զինաստանի գալիք հոկտեմբերի փոքրն եր և նրա դասերը չափազանց ուսանելի յեն միջազդային ու մանավանդ դադությունին յերկրների պրոլետարիատի համար :

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՏՈՆԻ ԿՈՄՊՈՒՆԱՅԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Կանտոնի կոմունայի նախորյակին, 1927 թ. յերկրորդ կետին պատակարգերի վոլխարաբերությունները կարելի յեւ հետեւակերպով ամփոփել :

1. Չան-Այայ-Շիի հեղաշրջումից հետո չինական բուրժուական բացահայտ կերպով անցավ իմասներիալիստների և ֆեոդալների կողմը: Ճիշտ ե, գեռևս գեներալների միջև կորվները չարունակվում եյին, սակայն միենանույն ժամանակ բանակցություններ եյին սկսվել միմյանց հետ լեզու գտնելու համար :

2. Մանր-բուրժուազիայի մի մասը, «ձափ» գոմինդանակաները՝ հետեւցին բուրժուազիային:

3. Բանվոր դասակարգը, ստեղծված նոր կացության հանգեղ, դասակարգային բացահայտ թշնամության պայմաններում, ինքնուրույն պարզաբեր յեր պատրաստվում՝ հանուն բանվորների և գյուղացիների գիշտառությամբ:

4. Գյուղացիական մասսաները մի շարք շրջաններում հետեւցին պրոլետարիատին, գյուղացիական շարժումը վիթիարի չուրագով աճեց :

Ստեղծվել եր այսպիսի մի դրություն: Դասակարգային թշնամունքները կանգնած են դեմ առ դեմ, մի կողմից՝ ֆեոդալ-բարժուական ուսակցիան և իմասներիալիստները, մյուս կողմից՝ բարձրագույնագույնացիական մասսաները:

Սպիտակ տերրորը հասել եր ամենաբարձր աստիճանին: Ամեն ոք հարյուրավոր բանվորներ և հեղափոխական գյուղացիներ յերի պլատում, բավական եր կոմկուսին պատկանելու մեջ փոքր կուսակած, և դաշիճն իր գործը տեսնում եր. բավական եր, վոր կոնայք կարճ մազեր ունենալին, իբրև հեղափոխական գնդակահարվելու համար:

Լենինը կոմինտերնի 2-րդ համագումարի լրացուցիչ թեղիների ութերորդ կետում ասում ե.

«Առաջին շրջանում հեղափոխությունը դաշտություններում կոմունիստական չի լինի, բայց յեթե հենց սկզբից նրան զլուխ կանգնի կոմունիստական ավանդարգը, ապա հեղափոխական մասսաներն ուղիղ ճանապարհ կհանդին, աստիճա-

Նական հեղափոխական փորձով հասնելու առաջադրված նպատակին : Իսպառ սիսալ կլինի ձգաելու նրան, վոր ագրարային հարցը լուծվի զուտ կոմունիստական սկզբունքներով : Իր զարգացման առաջին փուլում հեղափոխությունը զայդաբներում պիտի տարվի զուտ մանր-բուրժուական ու ֆորմիստական կետեր ունեցող ծրագրով, այն եւ հողի բաժնում և այլն :

Բայց սրանից չի բղխում, թե հեղափոխության զեկավարությունը գաղութներում գտնվելու յե բուրժուական դեմոկրատների ձեռքում : Ընդհակառակը, պրոլետարական կուսակցություններն ուժգին թափով պիտի քարոզեն կոմունիստական գաղափարները և առաջին իսկ հնարավորության դեպքում հաստատեն բանվորական և գյուղացիական խորհուրդներ» :

Այդ հնարավոր և անհրաժեշտ դեպքը՝ 1927 թ. վերջին, հարավային Չինաստանում ստեղծված սպայմաններն եյին :

Ինեկցիայի բանակն անցած բուրժուալիայի դրությամբ այս տեղ չեք : Իմպերիալիստները թեև գեղի շնչական հեղափոխությունը նույնատեսակ վերաբերում ունեյին, զինված միջամտության քաղաքականություն եյին վարում, բայց նրանցից յուրաքանչյուրը գեմ եր Չինաստանի բաժանման, վախճառով, վոր հակառակորդի ճանկը կընկնի մնեագույն պատառը : Բացի դրանց, նախկին, «հեղափոխական» բանակը բաժանվել եր մի քանի ժամանակ, գեներալ Տան-Շեն-Չին իր ուժերը հակադրում եր Նանկինի կառավարության, գեներալ Չան-Ֆա-Գուոյը (Գուանդունի խմբագրում) պատրաստվում եր արշավել գեներալ Լի-Տին-Սինի գեմ (Գուաննույի խմբագրում) : Նույնիսկ Կանտոն քաղաքում համարյա յերկիշմանություն եր տիրունմ . միսինիփոխուը նա ընկնում նոր Լի-Տին-Սինի կամ Չան-Ֆա-Գուոյի ձեռքը : Յերբ մի կողմէց Կանտոնի պրոլետարիատի ղեմ Լի-Տին-Սինը սարսափելի ունացրեականներ եր դործագրում, մյուս կողմից Չան-Ֆա-Գուոյն աշխատամ եր ոգտվել ու մոտենալ բանվորությանը, նրա ազգեցությամն և ուժը ոգտագործելու համար :

Գուանդուն նահանգի արենելյան մասում գյուղացիական շարժումները հանդել եյին Հայ-Լու-Ֆինի խորհրդային գյուղացիական կառավարությանը : Գյուղացիները գրավել եյին կալվածատերերի հողերը և կոտորում եյին նրանց : Միայն ապրիլից հոդամերեր աեղի ունեցան գյուղացիական յերեք խոչըր ապստամբություն՝ հարկերի, աղբարային խնդիրների հետ կապված : Տվյալ

շրջանում գործադուլների և բանվորների զինված յելույթների թիվն ել անընդհատ աճում եր (Գուանդունի նահանգում բանվորների թիվն այս ժամանակ հաշվում եր 660-800.000, վորչի 35.000-ն արդյունաբերական, մնացյալը տնայնապործական, ու բանվոր, կուլի և այլն, չհաշված Հոնկոնգի, անգլիական գաղութի մաս 200.000 բանվորները) :

Կանտոնի կառուվարությունը ցրել եր հեղափոխական արհմբությունները, կազմակերպել եր լեզալ դեղին արհմիություններ, բայց դործադուլային շարժումը կանդ չեր առել, ընդհակառակը, դործադուլները փոխվում եյին զինված յելույթների, տերորի և այլն : Առանձնապես նշանակալից եյին հոկտեմբերի 14-ի նոյեմբերի 7-ի դործադուլները : Բանվորական արհմիություններն ամրանում եյին : Կանտոնի կոմունայի նախորյակին անլեզաւ բանվորական արհմիությունների անդամնների թիվը 30.000 եք, հակառակ ստիտակ տերրորին : Միենույն ժամանակ աճում եք կամեատի հեղինակությունը և կոմյերիտմիության գործունեցությունը :

Այս ժողործ նկատի ունենալով ե, վոր 1927 թ. ոգոստոսին չուժարված Չինկոմկուսի կոնֆերենցիայում վորոշում կայացվեց Կանտոնի ապստամբության մասին : Մասսաների ակտիվությունն աճում եր : Չինկոմկուսը չեր կարող աչքերը միակ պահել այդ հրազդաւթյան վրա, նա պարտավոր եր ղեկավարել մասսաների այս որամագրությունները :

ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանտոնի ապստամբության նախորյակին Գուանդունի կոմյաժմտկերպության ուղարկած իր հրահանգում, Չինկոմկուսի կոնտինենտը հետևյալ առաջարկներն եր աճում ապստամբության ավտապատրուման մասին :

1. Գուանդունի կոմիտեն պետք ե հրապարակի մի ժանիֆեռա կոչ անելով նահանգի բանվորներին ու գյուղացիներին՝ ապստամբության հաստատել բանվորական, գյուղացիական, զինվորական և գյուղօրական խորհուրդների իշխանությունը՝ վորպես հակակըր հաւանդունի և Գուանսիի միլիտարիստների իրար ղեմ պատրությունը կլիկներին :

2. Կանտոնի բանվորները պետք ե վոտքի յելնեն իրենց զահարգի շահերը պաշտպանելու համար, նախաձեռնություն շուշարերեն հեղափոխական արհեստակցական միությունների աշ-

բառաւանքը զեղավարելու գործում, պետք է հրավիրեն մի շաբախական կոնֆերենցիաներ, կարդավորեն բոլոր տարածային-թյունները, վերացնեն բոլոր հետադիմական միությունները, վաշնչացնեն հետադիմական առաջնորդներին և քաղաքական ընդհանուր գործադուլ սարքեն քաղաքում՝ իշխանությունը լիովին իրենց ձեռքը վերցնելու համար: Ընդհանուր գործադուլը պետք է սպառագործվի ֆարրիկային և դորժարանային առաջին կոմիտեները հիմնելու համար:

3. Բանվորա-դյուղացիական հեղափոխական բանակը Հայ- կա-Ֆինում պետք է դրդի գյուղացիական մասսաներին՝ մեծա- դույն չափով ավելացնելու կամավորների թիվը: Զին-Յի-Դանի և Խուան-Յի-Սյանի բանակների միջև պատերազմի հիմրավորու- թյունն արեւելյան գետի մոտ կամ այդ բանակների միացումն Արևելյան զետի շրջանում հարկավոր է հաշվի առնել, Հայքուայի և Կանտոնի դրավման պլանը կազմելիս:

Բանվորագյուղացիական բանակը իր առաջնադաշտման ժամանակ պետք է դրդի գյուղացիությանը՝ վոչնչացնելու կարվածա- ռերին և ջննդրիներին, բաժանել հողը և այդպիսով խորացնել այլարային հեղափոխությունը:

4. Զժան-Յի-Ֆույի և Խուան-Յի-Սյանի պայքարի ժամանակ, ըստհանուր գործադուլ հայուարարված մոմենտին, Գուաննդունի (Կանտոնի) յերեք յերկաթուղիների բանվորներին պետք է կոչ արդի՝ վոչնչացնել մեխանիկների միության ռեակցիոն առաջնորդ- ներին և իրենց ձեռքը վերցնել յերկաթուղիների կառավարման գործը:

5. Գուաննդունի այլևայլ շրջաններում և Կանտոնի շրջակայ- քամ գյուղացիական շարժում առաջացնելով, մեր ընկերները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն Կանտոնում մեր ու- ժերը կենտրոնացնելու գործին և ամեն կերպ աշխատեն կարել Համառակորդի հաղորդակցության ցամաքային և ջրային ճանա- պարհները: Միևնույն ժամանակ, մենք պետք է հեղափոխական առաջնորդություն բարձրացնենք գյուղում:

6. Գուաննդունի հարավային մասերի և Հայնան կղզու պյու- թացիներն արդեն ապստամբել են: Մեր անմիջական խնդիրն է՝ բռա Հնարավորության ընդարձակել ապստամբությանը մասնակ- տակ գյուղացիական մասսաների շարքերը և կազմակերպել զդալի- տերիտորիայի վրա գործող բանվորա-գյուղացիական իշխանաւ- թյուն: Գյուղում, գասակարդային պայքարը պետք է հասցնե- րացահայտ կովի:

7. Գուաննդունի հյուսիսային և արևելյան շրջաններում, վար- ուեղ Գուաննդունի և Գուաննսիի միլիտարիստների կլիները պա- ռեցազմ են մղում վարձկանների միջոցով, դյուղացիական շաբ- աւմը պետք է աշխատի վոչնչացնել միլիտարիստների ուժերը, հրաժարվելով կուլիի պարտականություններ կատարել բանակում և մթերքները վաճառել զորքին, կործանելով յերկաթուղային և յրային արանսպրուր, բռնելով յերկու կողմերի լրտեսներին, կաղ- մալուծելով յերկու կողմի բանակները, գրավելով բանակի դեն- քերը և Հորդորելով զինվորներին թողնել զորքերը և միանալ բան- վորների ու գյուղացիների հեղափոխական բանակին: այդպիսով պետք է ընդարձակել և ամրացնել գյուղացիական ապստամբու- թյունների հաղթանակը:

8. Բանվորա-գյուղացիական բանակի առաջին՝ Ցյանսի նա- հանգի Սինֆան քաղաքի կողմը նահանջած զիվիզիան պետք է ան- միջազնո գնա դեպի Լյաուդունի, Սիննինի և Ուիուայի կողմերը՝ գյուղացիներին միանալու և Ուիուայի ու Ցյիսին շրջաններում գյուղացիական ապստամբություն բարձրացնելու համար:

9. Բանվորա-գյուղացիական ապստամբություն կազմակեր- պելով, մենք պետք է հաշվի առնենք բանվորական շարժման մա- կարդակը գլխավոր քաղաքներում, և արհեստավորներին՝ այլե- այլ շրջաններում: Մենք պետք է ուղնենք նրանց՝ պայքարն ուժե- ղացնելու, անտեսական ու քաղաքական գործադուներից անդ- հենք զինված ապստամբության:

10. Համաձայն մեր աշխատանքի նոր գրութիւնի, Գուաննդունի կոմիտեն պետք է հրահանգի միլիտարիստների բանակներում գունվող մեր զինվորական բոլոր ընկերներին, թե ինչպես պետք է մտնել բանակի շարքերը և աշխատել խոռվություններ առաջ բերել զինվորների մեջ, համոզելով նրանց ապստամբել, ցրվել գյուղե- րը: Բարոյալելով միլիտարիստների զորամասերը, մենք պետք է ղեկավարենք գյուղացիներին՝ նահանջող զորքերի զենքերը խլե- րու և զինվենք զրավված ղենքով:

11. Գուաննդունի արդի գրությունը նպաստում է բանվորների գյուղացիների հաջողության: Գուաննդունի ամբողջ կոմիտեն պետք է մորիլլզացիայի յենթարկվի այդ աշխատանքների համար և վարեկ վորոշում ընդունելիս կոմիտեն պետք է համաձայնեցնի ոյն՝ ներկա ողերի ապստամբությունը բանաձեւերին ու ամեն կերպ աշխատի կեն- տակործել այլ բանաձեւերը»:

Այսպէս, Հակասակ նբան, վոր Զինաստանի մյուս մասերում

Հեղափոխությունը նահանջում եր, Գուանդունի նուհանջում հեղափոխական սիտուացիա կար: Զինկոմիուսի կենտրոնական կոմիտեն վորոշեց ապստամբությունն սկսել հոկտեմբերի 10-ի բույս 11-ի գիշերը: Ազգատամբության լողունդները հետևյալներն ենին.

«Բոլոր քաղաքական բանտարկյալների անմիջական ռազմում՝ բանվորների և գյուղացիների դինում։ մամալի, ժողովի, խոռքի, կաղմակերպման, գործադուլի լիտկառար գեմոկրատական աղաւառություն բոլոր աշխատավորների համար։

«Հոնկոնգի գործադուլավորների իրավունքների կառարյալ և անմիջական վերականգնում և լայնացում, դարձագույն նպատակների նպաստի և աշխատավարձի հավելում։ բարեգույնների բնակարանների գրավում հողուոտ աշխատավորների, հողերի հանձնումն գյուղացիության, մահ կարգածութերներին և ջննտրին։ զինվորների սուճիկը առնական 12 դոլլարից բարձրացնել 20 դոլլարի, զինվորների հեղափոխական կոմիտեների ստեղծումը ռեակցիոններ դենքաւաների գեմ կովելու և բանակի ֆինանսները կոմտրոլի յեթարկելու համար։ Գոմինդանի տապալում, Զան-Ֆա-Փույշ և Լի-Տին-Մինի հետ միասին։ սպիտակ տերրորի հեղինակների ձերբակալություն և մահաւատիմ, բրինձը բանվորներին և հողը գյուղացիներին, կորչեն միլիոնարիստները, ամբողջ իշխանությունը խորհուրդներին, ամբողջ իշխանությունը բանվորներին, գյուղացիներին և զինվորներին։ Դաշինք Ասուհրդային Միության հետ բոլոր ինդոքիանաների գեմ, կորչեն իմապերիլիստաները»։

Նոյեմբերի 26-ին կուսակցության տեղական կոմիտեն ոռնդեց մի ռազմահեղափոխական կոմիտեն, կարմիր գվարդիայի շեց մորիլիդացիայի յեր լինթարկելու կուսակցություն շտաբ, վորը մորիլիդացիայի յեր լինթարկելու կուսակցություն անդամներին, կաղմակերպելու յեր 2.000 բանվորներից բազկացած մի կարմիր գվարդիա, զեկավարելու յեր ռազմանյութի հայթայթումը, կաղմակերպելու յեր նրա պատրաստությունը այլի։

Վարովհետեւ սպիտակ տերրորը չափազանց ուժեղ էր, Կանտոնի խորհրդի ընարությունը հետաձգվեց ապստամբությունից հետո, իսկ ժամանակավոր մի խորհուրդ կաղմից, ժամանակցությամբ 10 բանվորական, 3 զինվորական և 3 գյուղացիական ներկայացուցիչների։

Այդ խորհուրդն էր, վորի ընտրեց կոմիտրների խորհուրդը։

Հառատատեց ապստամբության ընդհանուր պլանը և կօժունայի ընթացքում վավերացրեց հրատարակված գեկրեաները։

Մասսաների մեջ ել վորոշ նախապատրաստական աշխատանք արված էր։ Առանձին ուշաղրություն էր գարձված չոփերների ժիության վրա, վորակեսդի ապստամբության որը նրանք գտնվեն խորհրդի տրամադրության տակ, պրոլետարական զինված ուժերի տեղափոխության համար։

Հրատարակվում էր յերկու թերթ, «Բանվորա-գյուղացիական թերթ» և «Կարմիր դրոշակ»։ Տպագրական բանվորների մեջ յեղած կաղմակերպության չնորհիվ հնարավոր էր լինում անլեզակ, իսկ հետազայում կոմունայի ընթացքում բավարար գրականաւթյուն ունենալ:

Քաղաքում գտնվող զինվորների շրջանում ագիտացիան ուժեղ էր, սակայն կավոր քաղաքի ըրչակայքում գտնվող զինվորների հետ թույլ էր և այդ մեծ ազգեցություն ունեցավ կոմունայի գյուղատարածության վրա։ Ապստամբությունից կողմնակից էր կանտոնի զինվորական գվարոցի գունդը, քաղաքային պահակազորի մեծ մասը, հրեաաձիների մի մասը։ Ապստամբությունից մի շաբաթ առաջ, անլեզակ մի ժողովում 200 կուսակցական և անկուսակցական սպաններ ու զինվորներ յերգվել ենին մինչև մահ կովել բանվորական-գյուղացիական հեղափոխության համար։

Հայլութինի շրջանի գյուղացիության և այսուեղ կաղմակերպված խորհրդային իշխանության հետ կանոնավոր հրաբերություն կար, նրանց հրահանդեր, ողնություն, ազիտատորներ եցին ուղարկվում և հայլութինցիների հաջողությունների մասին անեղալ մամուլի միջոցով ազիտացիա յեր մղվում բանվորների ու զինվորների շրջանում։

ԿԱՆՏՈՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

Ապստամբության աղբանշան տվյալ զինվորական գունդը^{*}։ Դեկտմերը 11-ի առավոտյան ժամի 3 և կեսին, միտինդից հետո, վորին մասնակցում էր Զինկոմիկուսի կենտրոմի անդամ և կանտոնի Խորհրդի ռազմական կոմիտար ընկեր Զան-Ֆա-Լայը, ներկաները Գոմինդան կուսակցության իշխանությունը տապաշված հայտարարեցին, հետո տեղին ու անդը գնդակահարեցին 15

*Ապստամբությունը մի յերկու օրով ջաւա սկսվեց, վարովհետեւ կառավարությունը հրամայել էր սեղամեմբերի 10-ից զինտթափել հեղափոխական համարվող գնդերը։

բնակչուներ սպա և գուրս յեկան քաղաքի ռազմագիտական կե-
տերը գրավելու, վոստիկանությունը, Փաշխտական ուժերը պի-
նաթափելու համար :

Նախապես կաղմակերպված բանվորական զինված կարմիր
պարողիան հարձակվեց վոստիկանության, զինվորական վրութ-
իանության, զորանոցների և հակահեղափոխության վորջերի
վրա : Տրանսպորտի արհմիությունը մեծապես ուժնեց, տրամա-
գրելով ավտոներ, ավտորուսներ : Գրավված զենքերով զինվեցին
բանվորական նոր խմբեր :

Մի քանի ժամվա ընթացքում կանոնի համարյա բոլոր կա-
ռավոր կետերը գրավված եյին : Բանվորների իշխանության տակ
եր կենորոնական վոստիկանությունը, ուղիսն, զորանոցները,
բոլոր վոստիկանատները, զավառային կառավարական չենքերը
բանառը և այլն :

Բանատից անմիջապես ազատ արձակվեցին մոտ 800 քաղաքա-
կան բանտարկյաններ, վորոնց մեծ մասը կոմունիստներ և կոմի-
տիտականներ եյին : Գեներալ Զան-Ֆա-Գույյի հրետանու մեկ յեր-
բարդ ընկավ ապատամբների ձեռքը : Միենույն ժամանակ կանոն-
ի շրջակայքի հեղափոխական գյուղացիական խմբերը զրավել
եյին հյուսիսային կայարանը, արսենալը և քաղաքի ծայրամասե-
րը :

«Դեկտեմբերի 11-ին, գրում ե ապատամբության մասնակից-
ներից մեկը, բացի «բանտ» կոչված թաղամասից և մի քանի հո-
կահեղափոխական բներից, վորոնք դեռ դիմադրում եյին, ամբողջ
քաղաքը նորհրդային իշխանության ձեռին եր, չորհիվ բանվոր-
ների և հեղափոխական զինվորների անհախանթաց հերոսական և
համաձայնեցրած աշխատանքի» :

Քաղաքի իշխանությունը վերցնելուց հետո մնում եր կաղմա-
կերպել հեղափոխության պաշտպանությունը և հակահեղափո-
խության ջախջախումը :

Փողկոմխորհի առաջին գեկրետները հենց վերաբերում եյին
դրան՝ նորհրդային իշխանության և ուղմական ուժերի կաղմա-
կերպում և ամենաշտապ միջոցներ հակահեղափոխության դեմ :

Կանոնի խորհուրդը կառավարական որդոն եր. նբա հրա-
մանները, 100.000-ավոր որինակներ եյին տպվում և տարածվում
երա նախագահն եր մի բանվոր, Հոնկոնգի ծովայինների 1925 թ-
վարձագույի ղեկավարը : Անմիջապես կաղմակերպվեց կանոնավոր

կարմիր բանակ, վորի կեսից ավելին բանվորներ և դյուռացիներ
եյին, զինված պետական պահեստներից զրալած զինքերով :
Կարմիր բանակին միացան բաղմաթիվ զինվորներ, ինչպես նաև
զինաթափված բաղմաթիվ զինդերը :

Այսպէս, ապատամբության ծավալման զուրբնթաց, կոմունան
խորատկեց նախկին կառավարական ասպարատը, վարձու զինվո-
րության ինստիտուտը և առաջին քայլերն արեց Խորհրդային իշ-
խանության կաղմակերպման զործում :

Սակայն հակահեղափոխությունը զինվունին ջախջախված չեր:
Անհրաժեշտ եր, վոչ միայն քաղաքի մի քանի կետերում ամրա-
ցած հակահեղափոխականների հաշվու մաքրել, այլև քաղաքի հե-
ղափոխական իշխանության յենթակա շրջանում ճշմել լուսնե-
րին, վոստիկաններին, զավաճաններին և բնակցիոններին : Յե-
րեք որում 700-ից ավելի հակահեղափոխականներ զնդակահար-
վեցին : Գոմինդանի և ղեղին արհմիությունների կաղմակերպու-
թյունը լուծվեց և զրավվեց նրանց գույքը :

Գրավվեցին նաև բանկերը և աղջայնացվեցին :

Հետազայում հրատարակված դեկրետները հաստատում եյին
Յ ժամյա բանվորական որ, բանվորական կոնտրոլ գործարաննե-
րում, գործադուրկների նպաստի, բանվորների աշախտավարձի
հավելում, խոշոր արդյունաբերության և բնակարանների ազգայ-
նացում, հողի հանձնումը աշխատավոր գյուղացիության, կալ-
վածատիրության և նրա իրավունքները հաստատող պայմանդրե-
րի, հարկերի և նախկին պարտքերի վոչնչացում : Հայ-Լու-Ֆինի
Խորհրդային իշխանության պետը նշանակվեց հողժողկոմ, իսկ
Հայ-Լու-Ֆինի բանակը հայտարարվեց կարմիր բանակի մի մաս
և այլն :

Կանոնի կոմուտյունի ժամանակ բանվորները ցուցաբերեցին
հսկայական անձնագոհություն և հերոսություն : Վոչ միայն կու-
տեսականները, այլև անկուսակցական բանվորները կովում
եյին մոլեգնորեն, սլանում եյին այնտեղ, վորտեղ կարեի եր զդաց-
վում, հանդիստ և քուն մոռացել եյին : Բացառիկ հերոսություն
եյին ցուցաբերում կանայք, իրեն աղխոտառներ, կարմիր խաչի
քույրեր, զավաճանություն տարածողներ և այլն : Ռեակցիան իր
վրեժը լուծեց կոմունայի անկումից հետո, զնդակահարելով հար-
ցուցաբոր հեղափոխական կանաց :

Առաջին ըոսելից կոմունայի մտահոգություններից մեկը ցե-
ղավ կապ հաստատել Հայլուֆինի գյուղացիական կաղմակերպու-



Թյունների հետ, սակայն չհաջողվեց: Քաղաքը շրջադատված եր ամեն կողմից հակածեղափոխական բանակով և չինական իմպերիալիստական նավերով: Կոմունայի հրատարակումից հետո քաղաքից դուռս գտնվող ուժերը հարձակման անցան: Նրանք գետի կողմից ռազմանավերի սպաշտապանության տակ մի դիվիզիոն զարք քերեցին քաղաք, ռազմանավերի կրակի տակ նրանք ցամաք հանվեցին: Յերկրորդ որվա կեսին քաղաքի մի յերրորդը գտնվում եր հակածեղափոխականների ձեռքին. նրանք հարձակման ձեռնարկեցին այն շենքի վրա, վորտեղ գտնվում եր ռազմահեղափոխական խորհուրդը, կարմիր բանակի շտաբը:

Հերոսական հակածարձակմամբ կարմիր բանակը կարողացավ հետ մղել հակածեղափոխականներին և քաղաքը մաքրել նրանցից: Սակայն այդ հաջողությունը կարճ տևեց: Յերրորդ որը կարմիր կանոննը տեղի տվեց գերազանց ուժերի առաջ: Կանոննի կոմառնան և որվա գոյությունից հետո ընկել եր:

Այն, ինչ վոր կատարվեց Կոմունայի անկումից հետո, անսկարպելի մի նախճիր եր: Սպանությունների թիվն անհաշիվ եր: Բանվորներին կոտորում եյին անխնա կերպով: Ահա այդ որերին եր, վոր չինական վայենշչինան հարձակվեց խորհրդային հյուպատոսարանի վրա և սպանեց հյուպատոսարանի աշխատակիցներին:

Չինական Գալիֆեններն արժանի յեղան Փրանսական իրենց նախահայր զահիճներին: Այդ կոխների ժամանակ եր, վոր ընկալ նաև ժողկոմիորհի նախագահ ընկ. Զան-Տա-Լայը:

ԿՈՄՈՒՆԱՅԻ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Կանոննի կոմունան գրեց ճնշված ժողովուրդների հեղափոխության պատմության ամենափառավոր եցերից մեկը: Նրա դաստիքը պետք է մանրակրկիտ ուսումնասիրության յենթարկի միջազգային պրոլետարիատը, և հենց այդ ստիպում է մեզ վեր հանել այն պատճառները, վորոնց հետեանքով ընկալ կանոննի կոմունան: Այդ որյեկտիմի և սուրյեկտիվ պատճառների պարզումը վոչ միայն մազաշափ չի կարող նսեմացնել նրա արժանիքները, ոչ ոչնդհակառակը:

Վորոնք եյին այդ պատճառները:

1. Կոմունայի պարտության առաջին պատճառն այն եր, վոր հեղափոխական ապստամբ գյուղացիական խմբերը չկարողացաւ

ժամանակին ողնության հասնել կարմիր քաղաքին: Յերբ նրանք ժոտեցել եյին կանոննին, պրոլետարիատն արդեն պարտվել եր: Յեվ առհասարակ բանվորական ու գյուղացիական շարժումների վոչ միաժամանակ լինելն աչքի յե խփում չինական հեղափոխության ժամանակ: Յերբ Շանհայի պրոլետարիատը 1925 թ. ապրաւամբվեց, յեր 1926 և 1927 թ.թ. գործադուլների և մասսայական շարժումների շրջան եր քաղաքներում, դյուղացիությունը չեր արձագանքում: Նա ոկտեց շարժվել, յերբ պրոլետարիատը նահանջի ճանապարհին եր: Գոնե յեթե պրոլետարիատի արիերգարային կովի՝ կանոննի կոմունայի ժամանակ նա հասներ, գրությունը հավանաբար տարբեր կլիներ:

2. Կանոննի պրոլետարիատի ուժերը թույլ եյին՝ թվով և ապմական հանդերձանքով ուժեղ թշնամու հանդես: Խսկ թշնամու բանակում քաղաքից գուրս գտնվող զինավորության շրջանում նախապատրաստական աշխատանքը համարյա չկար: Զինական նավատորմիղը հակածեղափոխականների կողմն եր և դետի կողմից մերակոծում եր կոմունաբների դիրքերը:

Չինական հեղափոխականները բացարձակապես ծանոթ չեյին քարիկադային կովին: Յեվ վերջապես այն յերկու հակածեղափոխական գեներալները-Լի-տին-Սինը և Չան-Ֆա-Գույը, վորոնք մի քանի որ առաջ իրար գեմ եյին կովում, անմիջապես միացան հեղափոխությունը ճնշելու համար:

3. Իմպերիալիստաները հսկայական ողնություն ցույց տվեցին չինական միլիտարիստներին: Հոնկոնգը (անգլ. գաղութ) նրանց բազան եր:

Ճապոնացիները զորք հանեցին քաղաք «իբր թե իրենց հուատակեներին պաշտպանելու համար», բայց անընդհատ խանդարում եյին կոմունարների շարժումները, լրտեսություն եյին անում, ձերբակալում եյին բանվորներին: Անգլիացիները և ամերիկացիներն իրենց նախերն եյին տրամադրել զորքերի փոխադրության համար և այլն:

4. Կոմունայի կողմից կազմակերպված կարմիր բանակը հարկ յեղած պատրաստությունը չուներ: Վոչ միայն հարկ յեղած զենքերը չկային, այլև կարմիր բանակի կազմի մեջ մտնող բանդորներն ու գյուղացիները լավ ծանոթ չեյին ու աղմական գործածել չգիտեյին: Հրամանատարները հասարակ բանվորներ եյին, վորոնք հաղիվ ծանոթ եյին դենքերի

գործածության։ Մինչդեռ հակառակորդ բանակը ուղարկած պատրաստության մեջ գտնվող զինված ուժ եր՝ կովի ընթացքում նույնիսկ կոմունարների բազմաթիվ թնդանոթներ անդործ մնացին, վորովհտել հրետաճիբներ չկային։

Բացի այս որյեկտիվ պատճառներից, ապստամբության ղեկավարությունը դործեց մի շարք սխալներ։

Առաջին հերթին ռազմահեղափոխական խորհուրդը դանդաղ կուտություն ցույց տվեց թշնամի ուժերի վրա հարձակվելու խնդրում, խղելու նրանց շղթան և կատվելու Հայլուֆինի ապշտամբ դյուլացիների հետ։

Յերկրորդ՝ ղեղին արհմիությունների անդամների շրջանում նախապատրաստական աշխատանք չեր տարվել, վորի պատճառով ել նրանք ղեմ դուրս յեկան կոմունային, ինչպես մեքենավարների արհմիությունը։

Երրորդ՝ Կանտոնի շրջակայքի գյուղացիությունն աչքաթող արվեց, կուսակցությունը և կոմյերիումիությունը բավարար չափով նախապատրաստված չեն յեղել։ Զինկոմկուսի կենտկոմի ղեկավարությունը թույլ ե յեղել և այլն։

Կանտոնի կոմունայի անկոմից հետո հեղափոխական ուժերի մի մասին հաջողվեց կարել պաշարման շղթան և գնալ միանալ Հայ-Լու-Ֆինի գյուղացիական խորհրդային իշխանությունը շարունակվեց, շարունակվեցին նաև գյուղացիական ապստամբությունները և պարտիզանական կորիները հարավային և կենտրոնական Զինառանի մի շարք նահանգներում։

ԿԱՆՏՈՆԻ ԿՈՄՈՒՆԱՅԻՑ ՀԵՏՈ

Կոմինտերնի երդ կոնդրեսի տված այն զնահատականը, թե Կանտոնի կոմունայով սկսվում ե Զինաստանի հեղափոխական շարժման նոր շրջան, միանդամայն հաստատվեց հետապայում, հեղափոխական իրազարծությունների դարբացման ընթացքում։

Կանտոնի կոմունայի կարճատեղ գյությունը յերեք չեր նշանակում, վոր հեղափոխությունը պարտվեց Զինաստանում։ Ճիշտ է, չինական պրոլետարիատը և աշխատավոր գյուղացիությունը խոչը կորուստներ կրեցին, սակայն աղդային աղատադրական շարժման մեջ ուժեղացավ գասակարգային պայքարը։ Զինական պրոլետարիատն ավելի ու ավելի գիտակցեց, վոր իր վակատար

ազատապրումը հնարավոր ե ձեռք բերել իմպերիալիզմի և չինական քուրժուազիայի, կալվածատերերի ու գենրալների դեմ հավասարապես կրիվ մղելով։

Կանտոնի կոմունան, ինչքան արիերդարդային կոիվ եր հեղափոխական աշխատավրւթյան նահանջը պաշտպանելու համար, նույնքան և ավանգարդային մարտ եր զալիք դասակարգային պայքարի համար։ Զինաստանում կիսատ եր մնացել բուրժուական դեմոկրատական հեղափոխությունը։ Այդ հեղափոխությունն իր վախճանին հասցնելու և սոցիալիստական հեղափոխության անցնելու պատմական միսիան ընկնում եր չինական պրոլետարիատի անդամական գյուղացիության ուսերին։

Կանտոնի կոմունայի պարտությունից հետո սոցիալ-դեմոկրատիան, Տրոցկին, «աջ» ռենեգատները գտնում եյին, վոր չինական բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը հասել ե իր վախճանին, վոր նոր հեղափոխական վերելք Զինաստանում յերկար տարիների ընթացքում անհնար ե։ Նրանք իրենց դավաճանական լիկվիդատորական տրամադրություններով առաջադրում եյին զինաթակիվել, լրել հեղափոխության դիրքերը, դադարեցնել պայքարը Գոմինդանի դեմ։

Կանտոնի կոմունայի պարտությամբ վերջացավ հեղափոխության առաջին շրջանը։

Կանտոնի կոմունայի պարտությամբ սկսվեց միջին մի շրջան հեղափոխության առաջին շրջանի ու դալիք վերելքի միջև, յերբ հեղափոխական պրոլետարիատն ու գյուղացիությունը ծանր պարտություններ կրեցին, յերբ կոմկուսակցությունը կորցրեց իր կաղըբերի մի մասը, բուրժուազիան դադարեց իր պայքարը իմպերիալիզմի դեմ և ժամանակավոր զաշն կապեց Փեոլալ-միլեարիստների հետ։

Հեղափոխության առաջին շրջանի վերջանալուց, բանվոր-դյուտաշխական հեղափոխական շարժման ժամանակավոր պարտությունից հետո ստեղծված դրությունը չինական քուրժուազիայի կողմից ողտազործվեց ամբացնելու իր զիրքերը, ամբողջ անտեսական, քաղաքական, ուղղմական իշխանությունը իր ձեռքը կենտրոնացնելու միջոցով։ Դրանով բուրժուազիան հեղափոխության իշխանությունը համարեց լուծված։ Այդ շրջանի մասին գոմինդանական ժամանական ամենալավ տվել ե իր ժամանակին հետեւյալ գնահատականը։

«Զինաստանում հեղափոխությունը հաղթանակել ե, վեր-

Հացել և հեղափոխության շրջանը և սկսվել և չինարարության
մի շրջան»:

Այդ չինարարությունը զեկավարելու յեր նանկինի կատավարու-
թյունը, վորի ծրագրի հիմնական կետերն եյին՝ բանակի մեծ մասի
զինաթափում (այսինքն դեներալների ռազմական ուժի կրծատում
և նրանց յենթարկելու ազգային կառավարության), ֆինանսական
հարկային և բանկային միասնական սիստեմ, արդունաբերու-
թյան և տրանսպորտի զարդաշման և այլն: Ծրագիրն ամփոփված
ե այն մանիթնեստի մեջ, վորն ազգային կառավարության կողմից
հայտարարվեց 1928 թվի հոկտեմբերին: Մի խոսքով, չինական
բուրժուազիան ձգուում եր ստեղծել բուրժուական միացյալ չինա-
կան մի պետություն:

Համարյա նման զնահատական տվել և նաև 2-րդ ինտերնա-
ցիոնալը: «Չինաստանը մտել և կապիտալիստական զարգացման
հոմի մեջ, այսպես ասված և 2-րդ ինտերնացիոնալի Բրյուսելի
կոնցրեսի վորոշումների մեջ: «Սոցիալիստ» Ալբեր Թոման դեպի
Չինաստան կատարած իր ճանապարհորդությունից այնքան եր
վոգեվորված, վոր ել ալելի առաջ դնաց, նույնիսկ ազգային կա-
ռավարությունը համարելով «Չինաստանը խաղաղացնող, սոցիո-
միզմ կառուցող և բանվոր դասակարգի շահերին պաշտպան»:

«Չինաստանում իմ տեսածների հիման վրա կարող եմ հայ-
տարարել, ասում ե Ալբեր Թոման, վոր չինացի բանվորների
և կալիստալիստների կյանքը նույն մակարդակի վրա յե,
գասակարգային խորություններ չկան, դասակարգային պար-
քարը վոչ մի արժեք չունի այդ յերկրների համար» (Շահհայի
«ՇՈՒՆ ՊԱՌ» չինական թերթի աշխատակցին արած հայտա-
րարությունից):

Մի այլ առթիվ Պեկինի պաշտոնական արհմիությունների ժա-
ռավում արտասահմած իր ճառում թոման հայտարարել եր.

«Գետք և վոր չինացի բանվորները բացարձակապես ընդու-
նեն Սուն-Յաթ-Սենի վարդապետությունը: Նախ պիտի ար-
տադրությունը բարելավել, հետո խոսել հավասար բաժանման
մասին» (նոյն թերթի 1928 թ. նոյեմբերի 22-ի համարում):

Այդպիսով, թե՛ Գոմինդանը և թե՛ 2-րդ ինտերնացիոնալը
դառնում եյին, վոր Չինաստանում հաղթանակել և բուրժուական
հեղափոխությունը, Չինաստանն անցել և «կապիտալիստական
չինարարության» և սրանից հետո նաև, մի շարք յելլուական յեր-

կը ների որինակով պետք է առաջ գնա կապիտալիստական զար-
գացման ուղիով: 2-րդ ինտերնացիոնալը խանդավառված այդ
գրությամբ, հանձին Ալբեր Թոմանի, խրատում եր նույնիսկ չի-
նացի բանվորին, վոր «վոչ թե պետք ե պայքարել, այլ ողնել կա-
պիտալիսմի զարգացմանը Զինաստանում, հարմարվել ստեղծված
գրությանը, մանավանդ, վոր ըստ Ալբեր Թոմանի «աղբային (Նան-
կինի կառավարությունը, վոր միլիոնավոր հեղափոխական բան-
գրներ և գյուղացիներ և կոտորել) ըմբուռում ե, թե ինչն ե վատ
կապիտալիզմի մեջ»:

ԿՈՄԻՆՏԵՐՆԼ ՉԻՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

«Բրոմական հակառակ զնահատական տվեցին իրերի գրու-
թյանը Կոմինտերնի Գործկոմի իներորդ պլենումը 1928 թ. փետր-
վարին, ինչպես նաև վեցերորդ կոնգրեսը: «Չինական հեղափոխու-
թյան ներկա շրջանը բուրժուական-դեմոկրատական հեղափոխա-
կան շրջանն ե, վոր չի վերջացել վոչ տնտեսական տեսակետից (աղ-
բարային հեղափոխություն և ֆեոդալական հարաբերությունների
վերացում), վոչ իմպերալիզմի դեմ ազգային պայքարի տեսակե-
տից (Չինաստանի միացում և ազգային անկախություն), վոչ
էլեկտրոնական դասակարգային բնույթի տեսակետից (պրոլետա-
րիատի և գյուղացիության դիկտուտուրա):

Հետադա անցքերը մի անդամ ևս ասպացուցեցին Գոմինդանի
քաղաքականության սնանկությունը և Կոմինտերնի զնահատա-
կանն այն մասին, վոր Չինաստանում, ինչպես նաև գաղութային և
կիսազգության այլ յերկրներում, բուրժուազիան ընդունակ չի
բաժել բուրժուական-դեմոկրատական հեղափոխության խնդիր-
ները (աղբարային հարց, հակամակերիալիստական պայքար,
ժիացյալ պետության կազմակերպումը և այլն):

Գաղութային յերկրներում իմպերիալիզմի տարած անտեսա-
կան ձևացան քաղաքականությունը, տեղական բուրժուազիայի
ըսրբերում առևտրական բուրժուազիայի և կալվածատերերի նույ-
նաթյունը, արդյունաբերական բուրժուազիայի թուլությունը և
երս հեղափոխական որիենտացիան՝ պրոլետարական մասսաների
հեղափոխականացման պրոցեսի պայմաններում, դյուղացիական
ժամաների դասակարգային գիտակցության գալը համար

մղկող պայքարում, չինական բուրժուազիայից խլել են բուրժուազիան հեղափոխության շարժիչ ուժը մնելու գերը: Այս պատճառով ել նա վորոշ պայքարից հետո զիջեց իմարերիալիզմին, համաձայնության յեկավ ֆեոդալ միլիտարիստների հետ:

Հիմնական խնդիրներից մեկը, վոր չինական բուրժուազիան չկարողացավ լուծել, ադրաբային հարցն ե: Ադրաբային հեղափոխությունը բուրժուազիան-դեմոկրատական հեղափոխության առանցքն ե: Հողային սեփականության փոխհարաբերությունների մեջ համարյա վոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել մինչեւ հիմա: Հողերի մեծ մասը կենտրոնացած են մնում կարվածատերերի ձեռքին, ինչպես նաև վոռովման ցանցը, վորք մեծ նշանակություն ունի Զինաստանում: Հողային արենդ մնում են ախորդ բարձրության վրա: Հեղափոխության շրջանում վորոշ վայրերում իշեցված ադրաբային արենդը նորից բարձրացել եր:

